

Մարմաշեն

Վարչական ղեկավար՝ Համլետ Տիգրանյան

Հեռ 093 52 43 52

Մակերես՝ 12.2կմ²

Բնակչություն՝ 1769

marmashen.shirak@mta.gov.am

Գյուղ Գյումրիի տարածաշրջանում, Գյումրի քաղաքից գտնվում է 7կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գանլըջա, Գալինջա, Գանրճա Վերին, Ղալանջա, Ղանլաչա, Ղանլիճա, Մարյամ Նիշին, Մերեմ Նիշին անվանումները: Մարմաշեն է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղի մոտով անցնում է Գյումրի-Աշոցք ավտոխճուղին և Շիրակի ջրանցքը:

Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախափնյա հովտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1620մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում կան արտեզյան ջրհորներ: Գյուղի շրջակայքում է գտնվում Մարմաշենի վանքը և նրա շրջակա երեք եկեղեցիները: Գյուղի անվանումը կապված է վանքի անվան հետ: Ըստ Կիրակոս Գանձակեցու վանքը իր անվանումը ստացել է իբրև մարմարակերտ լինելու պատճառով: Այդ փաստը ժխտում է Ղևոնդ Ալիշանը և վանքի անվանումը կապում է Աբխազիայի Մարիամ թագուհու հետ: Վանքի գլխավոր կառույցը կաթողիկե ս. Ստեփանոս եկեղեցին է, որի պատերից մեկի վրա թողնված արձանագրությունը վկայում է, որ այն կառուցել է Վահրամ Պահլավունին՝ 988-1029թթ: Եկեղեցուն կից գերեզմանում հենց թաղված է Վահրամ Պահլավունին, նրա կինը՝ տիկին Սոփին: Միջնադարում այն եղել է կրոնական և մշակութային կենտրոն:

Շրջակայքում կան հին բնակավայրի, քարայր-բնակավայրեր: Մարմաշենի մոտ 2կմ արևմուտք ժայռի վրա գտնվում է ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի արձանագրություններից մեկը:

Մոտակայքում գտնվում են նաև Մարմաշենի բերդի ավերակները:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել Արևմտյան Հայաստանի Դերջանից, Մուշից, Կարսի մարզից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 109, 1926թ.-ին՝ 743, 1939 թ-ին՝ 1066, 1959 թ-ին՝ 1334, 1970 թ-ին՝ 1404, 1979 թ-ին՝ 1341 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 1769 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 30%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 392 տնտեսություն: Ունի միջնակարգ և երաժշտական դպրոցներ, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 526հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 34 և 320 հեկտար:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են այգեգործությամբ, հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Նախկինում զբաղվել են շաքարի ճակնդեղի մշակությամբ, որոնք վերամշակվել է Սպիտակի շաքարի գործարանում: Երկրաշարժի արդյունքում գործարանը հիմնովին ավերվել է և շաքարի ճակնդեղի

ցանքերի մակերեսները զգալի կրճատվել են: Ջրաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Գյուղում զբաղվում են տուֆի արդյունահանմամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Մարմաշեն

Ինդեքս՝ 2618